Հավելված N 251
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Եվրամիության հետ տնտեսական համագործակցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 23-32.10-Ղ4-3)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3 Ենթակա և հաշվետու աշխատողներ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Պաշտոնի փոխարինման պաշտոնները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:

1.5 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1) կազմակերպում է ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի»՝ առևտրին առնչվող մասի ամրագրված դրույթների իրականացման շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցումը,

2) կազմակերպում է ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» ճանապարհային քարտեզի իրականացման շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի դրույթների և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորությունների կատարումը,

3) կազմակերպում է ԱՀԿ Առևտրի դյուրացման համաձայնագրի ներքո երկրի ամրագրված պարտավորությունների իրականացման ապահովումը, համապատասխան ծանուցումների ներկայացումը,

4) կազմակերպում է ԱՀԿ շրջանակներում ՀՀ ամրագրված սահմանային մաքսատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության կոմպենսացիոն բանակցային գործընթացի իրականացումը՝ մասնավորապես Եվրամիության և ԱՀԿ այլ անդամների հետ,

5) կազմակերպում է ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացված «ՀՀ առևտրի կարգավորիչ և ընթացակարգային խոչընդոտների

վերացում՝ կարիքների գնահատում» ուսումնասիրության ներքո առաջարկությունների և խորհուրդների հետագա իրականացման գործընթացները,

6) կազմակերպում է Եվրոպական Միության և այլ երկրների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող արտոնյալ առևտրային ռեժիմների արդյունավետ իրականացնման և դիտանցման շրջանակներում ԱՀԿ համաձայնագրերի դրույթների և ՀՀ պարտավորությունների համապատասխանեցումը,

7) կազմակերպում է Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացների և ԵԱՏՄ-ի շրջանակներում ընթացող առևտրային բնույթի համաձայնագրերի բանակցությունների շրջանակներում իրականացվող աշխատանքների և մշակվող փաստաթղթերի՝ ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին և Հայաստանի Հանրապետության ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցումը,

8) կազմակերպում է ԵԱՏՄ շրջանակներում իրականացվող՝ առևտրային/մաքսային բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի, ներառյալ՝ ազատ առևտրի համաձայնագրերի մշակման և կարգավորմանն ուղղված գործունեության մշտադիրտարկումը/փորձաքննությունը՝ այն ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիության ապահովման նպատակով,

9) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի՝ ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին համապատասխանեցման ապահովման աշխատանքները,

10)կազմակերպում է ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ծանուցման պարտավորությունների իրականացման աշխատանքները՝ որպես Հայաստանի Հանրապետության ծանուցումների պատասխանատու մարմին,

11) կազմակերպում է ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող ԱՀԿ հարցման կետերի միջև համագործակցության և տեղեկատվական հոսքերի համակարգումը՝ ապահովելու ԱՀԿ համաձայնագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունները,

12)կազմակերպում է ԱՀԿ քարտուղարությունում գործող ոլորտային և առևտրային հանձնաժողովների և կոմիտեների աշխատանքներին և այդ շրջանակներում իրականացվող ծրագրերին ՀՀ մասնակցության ապահովումը, ՀՀ դիրքորոշումների ներկայացումը,

13)կազմակերպում է ԵԱՏՄ-ում ընթացող ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ստեղծման գործընթացի մշտադիտարկումը՝ ապահովելու այդ գործընթացի՝ ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ և ՀԳԸՀ կիրարկման ճանապարհային քարտեզների, ինչպես նաև ԱՀԿ համաձայնագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիությունը,

14)կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվող և առևտրային/մաքսային կարգավորիչ բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի նախագծերի մշտադիրտարկումն ու փորձաքննությունը՝ դրանք ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի դրույթների հետ համադրման և ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիության

ապահովման նպատակով,

15)կազմակերպում է վերոնշյալ մշտադիրտարկման, փորձաքննության և համապատասխանելիության ապահովման իրականացման նպատակով ՀՀ պետական կառավարման մարմիններից և էկոնոմիկային նախարարության ստորաբաժանումներից համապատասխան տեղեկատվության ստացումն ու վերլուծությունը,

16)կազմակերպում է ԱՀԿ անդամ երկրների ծանուցումների մշտադիտարկումը և վերլուծությունը՝ ՀՀ արտաքին առևտրի հնարավոր խնդիրների վերհանման, ինչպես նաև հնարավոր բարենպաստ պայմանների հայտնաբերման նպատակով, համապատասխան տեղեկատվությամբ ՀՀ պետական մարմիններին իրազեկումը,

17)կազմակերպում է ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի հետ համագործակցության և նրա գործունեության դիտանցումը,

18)կազմակերպում է ԱՀԿ համաձայնագրերի դրույթների ներքո ԱՀԿ քարտուղարության կողմից ՀՀ առևտրային քաղաքականության վերաքննության գործընթացի իրականացման շրջանակներում ժամանակացույցով սահմանված գործընթացների ապահովումը,

19)կազմակերպում է ՄԱԿ-ի առևտրային և տնտեսական կառույցների և մարմինների հետ (UNECE, UNCITRAL, UNCTAD, UNESCAP, UN ITC և այլն) համագործակցության աշխատանքների իրականացումը:

Իրավունքները՝

- ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» դրույթների և ճանապարհային քարտեզի իրականացման շրջանակներում ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցումն ապահովելու նպատակով շահագրգիռ մարմիններից և հարցման կետերից ստանալ համապատասխան գրություններ, իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկատվական փաթեթներ, հաշվետվություններ և տեղեկանքներ,
- ԱՀԿ շրջանակներում ՀՀ ամրագրված սահմանային մաքսատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության կոմպենսացիոն բանակցային գործընթացի ապահովման նպատակով ԱՀԿ և ԵԱՏՄ անդամ երկրների, ինչպես նաև Հայաստանի շահագրգիռ մարմիններից ստանալ համապատասխան գրություններ, իրավական ակտերի նախագծեր, բանակցային և տեղեկատվական փաթեթներ, առաջարկություններ, հավաքագրել համապատասխան կարծիքներ և նկատառումներ,
- Հայաստանի Հանրապետության կողմից՝ ԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով շահագրգիռ մարմիններից և հարցման կետերից ստանալ համապատասխան գրություններ, իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկատվական փաթեթներ, հաշվետվություններ և տեղեկանքներ, հավաքագրել համապատասխան կարծիքներ և նկատառումներ,
- Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացների շրջանակներում առևտրային բնույթի համաձայնագրերի մշակման ժամանակ դրանք՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցման նպատակով ԵԱՏՄ անդամ երկրների, ինչպես նաև Հայաստանի շահագրգիռ մարմիններից ստանալ համապատասխան գրություններ, իրավական ակտերի

նախագծեր, առաջարկություններ, տեղեկատվական փաթեթներ և այլ փաստաթղթեր,

- Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվող և առևտրային/մաքսային կարգավորիչ բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի նախագծերի՝ ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի դրույթների հետ համադրման և ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիության ապահովման նպատակով պահանջել գրություններ, համապատասխան իրավական ակտերի նախագծեր, տեղեկատվական փաթեթներ,
- ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի հետ համագործակցության շրջանակներում պահանջել հաշվետվություններ, զեկույցներ, գրություններ, տեղեկատվական փաթեթներ, ծրագրեր և այլ փաստաթղթեր,
- մասնակցել ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ իրականացման և ԱՀԿ հետ համագործակցության շրջանակներում իրականացվող աշխատաժողովներին, համաժողովներին և այլ միջոցառումներին,
- ՄԱԿ-ի առևտրային և տնտեսական կառույցների և մարմինների (UNECE, UNCITRAL, UNCTAD, UNESCAP, UN ITC և այլն) հետ համագործակցության շրջանակներում ստանալ փաստաթղթեր, ծրագրերի նախագծեր, փաթեթներ և վերլուծական նյութեր,
- ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ իրականացման և ԱՀԿ հետ համագործակցության շրջանակներում հայտնել համապատասխան կարծիքներ և նկատառումներ,
- ԱՀԿ հարցման կետերի միջև համագործակցության և տեղեկատվական հոսքերի կարգավորման շրջանակներում պահանջել ոլորտային զեկույցներ, փաստաթղթեր, ծանուցման նախագծեր, դիրքորոշումներ և առաջարկություններ:

Պարտականությունները՝

- ՀՀ-ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» դրույթների և ճանապարհային քարտեզի իրականացման շրջանակներում ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցումն ապահովելու նպատակով պատրաստել գրություններ, զեկուցագրեր, տեղեկանքներ, մշակել իրավական ակտերի նախագծեր և տրամադրել հաշվետվություններ,
- ԱՀԿ շրջանակներում ՀՀ ամրագրված սահմանային մաքսատուրքերի դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության կոմպենսացիոն բանակցային գործընթացի ապահովման նպատակով պատրաստել գրություններ, զեկուցագրեր, տեղեկանքներ, բանակցային փաթեթներ, մշակել իրավական ակտերի նախագծեր և տրամադրել հաշվետվություններ,
- Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մշակվող և առևտրային/մաքսային կարգավորիչ բնույթի օրենսդրական և նորմատիվաիրավական ակտերի նախագծերի՝ ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի դրույթների հետ համադրման և ԱՀԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանելիության ապահովման նպատակով լրամշակել ներկայացված նախագծերը, ներկայացնել անհրաժեշտ եզրակացություններ, առաջարկություններ, տեղեկանքներ և հիմնավորումներ,

• ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի և ԱՀԿ համաձայնագրերի դրույթներով սահմանված, ինչպես նաև ԱՀԿ անդամակցությամբ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով իրականացնել անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքներ, պատրաստել զեկույցներ և ծանուցումներ,

• ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ իրականացման և ԱՀԿ հետ համագործակցության շրջանակներում մշակել հաշվետվություններ, զեկուցագրեր, ուղեցույցեր,

• Հայաստանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացների շրջանակներում առևտրային բնույթի համաձայնագրերի մշակման ժամանակ դրանք՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցման նպատակով ներկայացնել դիրքորոշումներ, կատարել համապատասխան վերլուծություններ, պատրաստել գրություններ,

• ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ իրականացման և ԱՀԿ հետ համագործակցության շրջանակներում ուսումնասիրել և վերլուծել ՀՀ պետական կառավարման մարմիններից և էկոնոմիկայի նախարարության ստորաբաժանումներից ստացված տեղեկատվությունը, իրավական ակտերի նախագծերը և դրանց բարելավման հետ կապված ներկայացնել համապատասխան առաջարկություններ,

• UNECE, UNCITRAL, UNCTAD, UNESCAP, UN ITC և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման նպատակով ներկայացնել կարծիքներ և նկատառումներ, ՀՀ շահերից բխող առաջարկություններ,

• վերլուծել ԱՀԿ անդամ երկրներից ստացված ծանուցումները և առաջարկություններ նարկայացնել պետական մարմիններին,

ԱՀԿ համաձայնագրերով սահմանված ծանուցման պարտավորությունների իրականացումը ապահովելու նպատակով ուսումնասիրել մարմիններից և հարցման կետերից ստացված տեղեկատվությունը, պատրատել ՀՀ վերջնական ծանուցումներ և ներկայացնել ԱՀԿ քարտուղարություն:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) բնագավառում՝չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում

6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետցիաներ

1. Ծրագրերի մշակում և կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Ծրագրերի նախագծում, կառավարում և մոնիտորինգ
6. Ռեսուրսների բաշխում և կառավարում

Քաղաքականության մշակում և իրականացում:

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատվիրակված լիազորությունների շրջանակներում մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: